Հավելված
Գյումրի համայնքի «Անի պարտեզ մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի
տնօրենի 2024 թվականի հուլիսի 25-ի N049-Ն հրամանի

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի «Անի պարտեզ մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության ֆիզիկական կուլտուրայի հրահանգչի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու մասին**

| N | Թափուր պաշտոնի անվանումը | Հավակնորդին ներկայացվող պահանջները (չափանիշները) | Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը, ով՝ | Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերը (նյութերը) |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1. | **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի «Անի պարտեզ մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության ֆիզիկական կուլտուրայի հրահանգիչ (1.0դրույք)** | **1 ) Որակավորման պահանջները՝**<br>**նախադպրոցական ուսումնական հաստատության ֆիզիկական կուլտուրայի հրահանգչի պաշտոն զբաղեցնողը պետք է ունենա՝**<br>1) միջին մասնագիտական կամ բարձրագույն (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս) մասնագիտական կրթություն՝ համապատասխան որակավորմամբ կամ վերջին տասը տարվա ընթացքում մանկավարժական գործունեության առնվազն երկու տարվա մանկավարժական գործունեության ստաժ:<br>**2) Ընդհանրական պահանջները**.<br>1) նախադպրոցական ուսումնական հաստատության ֆիզիկական կուլտուրայի հրահանգչի պաշտոն զբաղեցնողը պետք է իմանա ստորև նշված նորմատիվ ակտերի այն դրույթները, որոնք վերաբերում են կրթության բնագավառին և կանոնակարգում են պաշտոնի նկարագրով ամրագրված լիազորությունները.<br>ա. «Կրթության մասին», «Նախադպրոցական կրթության մասին», «Երեխայի իրավունքների մասին», «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին», «Հանրակրթության մասին», «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» ՀՀ օրենքները, «Հայաստանի Հանրապետության նախադպրոցական ուսումնական հաստատություն, համայնքային ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրությունը», | Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը, որը՝<br>1) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.<br>2) դատական կարգով զրկվել է մանկավարժական գործունեությամբ զբաղվելու իրավունքից.<br>3) տառապում է ՀՀ կառավարության կողմից հաստատված այնպիսի հիվանդությամբ, որը կարող է խոչընդոտել մանկավարժական գործունեության իրականացմանը.<br>4) դատապարտվել է հանցագործության համար, և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ, բացառությամբ այն դեպքերի, երբ դատապարտվել է ոչ դիտավորյալ հանցագործություն կատարելու համար: | 1)դիմում (Ձև 1).<br>2)անձը հաստատող փաստաթուղթ.<br>3)կրթության մասին փաստաթուղթ.<br>4)աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ (առկայության դեպքում).<br>5)ինքնակենսագրություն.<br>6)մեկ լուսանկար՝3x4 չափի.<br>7)այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ.<br>8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ կամ զինվորական կցագրման վկայական.<br>9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում): |

<table>
<tr><td></td><td></td><td>նախադպրոցական կրթական չափորոշիչները և իր պաշտոնային պարտականություններին վերաբերող նախարարության նորմատիվ ակտերը, իրավական այլ փաստաթղթեր.<br>բ. նախադպրոցական մանկավարժության, հոգեբանության, տարիքային ֆիզիոլոգիայի, անատոմիայի, սանիտարական գործի, հիգիենայի, մարզագործիքների վրա ուսուցման մեթոդիկան, լողի ուսուցման մեթոդիկան՝ ըստ տարիքային խմբերի, ջրում մնալու կանոնները.<br>գ. անվտանգության տեխնիկայի պահանջները, ֆիզկուլտ-առողջարարական միջոցառումների անցկացման ժամանակ, ֆիզիկական զարգացման շեղում ունեցող երեխաների հետ աշխատելիս՝ արատաբանության հիմունքները և համապատասխան մեթոդիկան:</td><td></td><td>Մրցույթին մասնակցելու համար դիմած քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով:</td></tr>
<tr><td colspan="2">Մրցույթն անցկացնելու վայրը, օրը, ժամը</td><td colspan="2">Դիմումների և փաստաթղթերի ընդունումը</td><td>Դիմումների և փաստաթղթերի ներկայացման ժամկետները</td></tr>
<tr><td colspan="2">Վայրը՝ ք. Գյումրի, Վարդանանց հր. 1, Գյումրու համայնքապետարան 3–րդ հարկ, նիստերի դահլիճ օրը՝ 2024 թվականի օգոստոսի28–ին, ժամը՝ 10:30</td><td colspan="2">Փաստաթղթերը ներկայացնելու, լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար դիմել Գյումրի համայնքի «Անի պարտեզ մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն (հեռ. 077414578): Հարցաշարերը տեղադրված են ԿԳՄՍՆ կայքում (Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի «25» մարտի 2022 թվական N471 - Ա/2 հրաման):<br>Փաստաթղթերի ընդունումը՝ ամեն օր, ժամը 09:00 – 17:00, բացի շաբաթ և կիրակի օրերից:</td><td>2024 թվականի օգոստոսի 21-ը ներառյալ:</td></tr>
</table>